ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 դեկտեմբերի 2011 թվականի թիվ 211 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 26-Ի ԹԻՎ 30-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի <<Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին>> ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 15-ի <<Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 4-ի թիվ 198-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին>> թիվ 1769-Ն որոշումը՝

որոշում եմ.

1. Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի 2010 թվականի ապրիլի 26-ի <<Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետարանի աշխատակազմի ներքին գործավարության կարգը հաստատելու մասին>> թիվ 30-Ն որոշման մեջ կատարել հետևյալ լրացումները՝

1) որոշման 4-րդ կետը շարադրել հետևյալ նոր բովանդակությամբ.

<<4. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին:>>.

2) որոշման 1-ին կետով հաստատված կարգում՝

ա. 42-րդ կետերը շարադրել հետևյալ նոր բովանդակությամբ.

<<42. Հանձնարարականի կատարման ժամկետի բացակայության դեպքում, որպես հանձնարարականի ժամկետ սահմանվում է առավելագույնը 7 աշխատանքային օր, իսկ լրացուցիչ ուսումնասիրություններ, հիմնավորումներ պահանջող հարցերի դեպքում՝ առավելագույնը ևս 3 աշխատանքային օր, բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերի:>>,

բ. կարգը 54-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 54.1-ին և 54.2-րդ կետերով.

<<54.1. Արձանագրությունները կազմվում, խմբագրվում և նիստը վարողին են ներկայացվում ստորագրման ոչ ուշ, քան նիստի անցկացման հաջորդ աշխատանքային օրը:

54.2. Արձանագրությունը նիստը վարողի կողմից ստորագրվելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում՝ էլեկտրոնային և թղթային տարբերակներով առաքվում է հասցեատերերին:>>:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Ա. ՂՈՒԼԱՐՅԱՆ

27 դեկտեմբերի 2011թ.
ք. Իջևան